# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

## ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍի 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **28 ՀՈՒՆԻՍԻ 2021թ.**

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 21 հունիսի 2021 թվականի N 1–Լ որոշմամբ՝ հեռակա քվեարկությամբ տեղի ունեցավ Կառավարման խորհրդի արտահերթ նիստ: Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2021թ-ի հունիսի 23-ին և ավարտվել՝ հունիսի 25-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամներին:

**Կառավարման խորհրդի նիստին մասնակցում էին՝**

**Կառավարման խորհրդի նախագահ՝** Անդրանիկ Փիլոյանը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

**Կառավարման խորհրդի անդամներ՝**

Ս.Պապիկյանը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ա. Ասոյանը ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Կ. Բրուտյանը ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Վ.Դանիելյանը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա.Ավանեսյանը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

| | |
|---|---|
| Ա.Ղուլարյանը | ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ |
| Ս. Թովմասյանը | ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար |
| Ա. Դանիելյանը | Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ |
| Մ. Սանդոյանը | « ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ |
| Ա. Կարապետյանը | «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն |

Կառավարման խորհրդի նիստին և քվարկությանը չի մասնակցել Կառավարման խորհրդի անդամ Մ.Հովհաննիսյանը «Ճարտարապետության և շինարարության ՀՀ ազգային համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ:

**Քվորումն ապահովված էր:**

## ՕՐԱԿԱՐԳ

**1.** Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին՝ համաձայն հավելված 1-ի:

**2.** Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությանը՝ համաձայն հավելված 2-ի:

**3.** Հաստատել Հ Հ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը՝ համաձայն հավելված 3-ի:

4.Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվության նախագծին՝ համաձայն հավելված 4-ի:

5. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ստուգումների ժամկետների փոփոխությանը՝ համաձայն հավելված 5-ի:

**Քվեարկությունը համարվեց կայացած:**

**Քվեարկության արդյունքում՝**

1. Անդրանիկ Փիլոյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
2. Ս.Պապիկյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
3. Ա. Ասոյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
4. Կ. Բրուտյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
5. Ա.Ավանեսյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
6. Վ. Դանիելյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
7. Ա.Ղուլարյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
8. Ս. Թովմասյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
9. Ա.Կարապետյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
10. Ա. Դանիելյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ,
11. Մ. Սանդոյանը 1-ից 5-րդ հարցերին քվեարկեց կողմ :

Կառավարման խորհրդի անդամ Ս. Թովմասյանը օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ առաջարկել է «Հաշվի առնելով հիմնավորմամբ ներկայացրած պատճառաբանումները, առաջարկում ենք պաշտոնների անձնագրերում ամրագրել նեղ մասնագիտական բարձրագույն կրթություն ինչը, կարծում եմ, կխթանի մասնագետների առավել արդյունավետ ընտրության հարցում:»

Առաջարկն ընդունվել է , այն կքննարկվի և կհամաձայնեցվի ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ:

Կառավարման խորհրդի անդամ Ա. Ասոյանը օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ քվեարկել է կողմ՝ առաջարկությունն ընդունելու վերապահումով:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ առաջարկվել է.

«Նախագծի 6-րդ և 6.1-ին բաժիններում նկարագրվում է Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների և անգործության դեմ բերված բողոքների և դատական գործերի վերաբերյալ տեղեկատվությունը: Առաջարկվում է արտացոլել նաև գործերի արդյունքների կամ ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2021թ-ի 1-ին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվության նախագծի 9-րդ կետում ներկայացված տեղեկատվությունը կազմված է ոչ թե Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա, այլ Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին եռամսյակի գործունեության հաշվետվության ամփոփման հիման վրա: Առաջարկվում է վերոնշյալ տեղեկատվությունը ներկայացնել հիմք ընդունելով Տեսչականական մարմնի որակի ապահովման վարչության 2021թ-ի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման արդյունքները:

Օրակարգի 4-րդ հարցին կողմ է քվեարկվում՝ վերոգրյալ առաջարկներն ընդունելու վերապահումով:»:

Կառավարման խորհրդի անդամ Ա.Ասոյանի առաջարկներն ընդունվել են ամբողջությամբ, հաշվետվության նախագծի նշված կետերում կատարվել են համապատասխան փոփոխություններ և տեղեկատվությունը լրացվել է պահանջված կարգով:

**Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.**

**1.** Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին՝ համաձայն հավելված 1-ի:

**2.** Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությանը՝ համաձայն հավելված 2-ի:

**3.** Հաստատել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը՝ համաձայն հավելված 3-ի:

4.Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվության նախագծին՝ համաձայն հավելված 4-ի:

5. Հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ստուգումների ժամկետների փոփոխությանը՝ համաձայն հավելված 5-ի:

**Կառավարման խորհրդի նախագահ՝**

_____ **Ա. Փիլոյան**
ստորագրություն

**Կառավարման խորհրդի քարտուղար՝**

_____ **Ն.Մկրտչյան**
ստորագրություն